



Հրանտ Մաթևոսյան

Ծաղրածուների մեր տոհմը

Նվիրվում է Գուրգեն Մահարուն.

ուրիշ լավ բան չունի հեղինակը

Փռշու վրայով գլորվող ջրի հուշիկությամբ իմ մեջ մի բան սողում է, վարակելով ամբողջ մարմինս: Եվ բջիջներս տեղի են տալիս: Գուցե քաղցկեղ է, գուցե անցած անախորժության թաքուն հիշողություն, գուցե, անտեղյակ, որևէ ուժեղի մի բանում խանգարել եմ և սիրտս թաքուն սպասում է ծեծին: Գուցե և էությունս լցվում է որևէ սրամտությամբ, որը պետք է ծնվի ինչ-որ դիպվածով, հանկարծակի, փոշտոցի պես: Չգիտեմ: Եվ քանի դեռ չգիտեմ, նա ինձ համար սարդի պես դարանած քաղցկեղ է, պատժի սպասում է, քիթը մտած փոշեհատիկ է, որ սպասում է մի ճառագայթ արևի - հա՛պչ...

Գյուղում ենք, մեր տոհմի մեջ ենք: Իսկ տոհմեցիները ծաղրածուներ են, ամեն մեկը մի գյուղի կծիծաղեցնի: Իսկ երբ մի տեղ ենք հավաքվում բոլոր տոհմեցիներս՝ ծիծաղեցնելու ուժը մեծանում է այն հարաբերությամբ, ինչ հարաբերության մեջ է հարյուր առանձին գինվորների հարվածային ուժը հարյուր գինվորանոց վաշտի հարվածային ուժի հետ: Պարզ է, որ տոհմով կծիծաղեցնենք աշխարհի բոլոր գյուղերին: Պարզ է, որ հիմա մեր ծիծաղը պետք է գյուղում պատեպատ խփվելիս լինեն ամպրոպի արձագանքի պես: Տոհմում կա մի Մացակ, քսանհինգ տարեկան, նոր ամուսնացած, շատ քնող: Կա նաև մի արքադաղ. անուն՝ կունենա, երեխաները դրած կլինեն, ես չեմ հիշում: Անունը դնենք Սուլթան: Հենց որ այս Մացակն ամուսնացավ ու քնից ուշ էր վեր կենում, այս Սուլթանը սկսեց թոչել պատշգամբի բագրիքին ու՝ ծուրրուղո՛ւ, Մացակը քնած է՛... Այնքան էր կանչում, որ Մացակը ներսից պատասխանում էր՝

գահրումա՛ր... Հետո սկսեց տատիս համոզել, թե հիվանդ է, մինչև արագադղի միս չուտի՝ չի առողջանա: Իսկ տատս պատասխանում էր.

- Քո հասակի տղաները գյուղ են կառավարում:

- Դո՛ւ գիտես:

Մացակը շարունակեց ուշ արթնանալ, իսկ Սուլթանը՝ գյուղով մեկ հայտարարել, թե Մացակը, ծուղրուղո՛ւ, ընդամենը մի կին ունի, բայց քնած է, իսկ ինքը, ծուղրուղո՛ւ, երեսուն կին ունի, բայց շո՛ւտ է արթնա... Հենց այդտեղ էլ Մացակը նրան բռնեց: Տրուսիկով, մագերը խառը, մի աչքը կպած՝ դուրս եկավ ու բռնեց:

- Կմորթեմ, Մացակ ջան,- իրար անցավ տատը,- ամառվա աշխատանքը վերջանա՛ կմորթեմ:

- Դո՛ւ գիտես,- ասաց Մացակը: Եվ պարզվեց, որ Սուլթանը, չնայած ծիրանիին, սուտակե թագին և արքայական մյուս բաներին, սուրբ մզկիթ կտուցից գատ, իր վրա մի ուրիշ անցք ունի՝ դումաշով ծածկած, իսկ Մացակը դրա մոտավոր տեղը գիտե: Մացակը երկար ետ էր տալիս դումաշե դարսերը, իսկ Սուլթանը արքայական բարկությանբ ծղրտում էր ինչ-որ բան. եթե տոհմի երեխաները ներկա լինեին՝ ճշգրտորեն կթարգմանեին նրա մավրիտաներենը. մեծերս մերթ այս էիք հասկանում, մերթ այն. երևի Սուլթանը գլխատման հրաման էր տալիս. երևի հայտարարում էր իր անձեռնմխելիության մասին ի գիտություն, մեկ էլ կարծես թե որոշակիորեն ասաց. «չհամարձակվե՛լ»: Չգիտեմ, միայն թե «չ» տառն ու հրամայական շեշտը կային: Այդպես, տարբեր բաներ: Ով գիտե, այդ արքաները այնպես են խոսում բարկացած ժամանակ, որ մարդու թվում է, թե բառաչում են և ընդհանրապես չեն իմացել խոսել: Իսկ Մացակն իր գործին էր. հսկաների արքան թզուկըների նվեր բերված արքային տնտղում էր ըստ ամենայնի:

- Հրե՛ս:- Եվ Մացակը ժպտաց խնամքով թաքցված գողություն բացահայտողի քննիչի ժպիտով:

Հիմա Սուլթանը հաշտություն էր աղերսում. հարենը թողնում է Մացակին, ննջարանի սահմաններում կռճիկափող չի փչում, դառնում է վասալ-արքա, կղա՛, կղա՛, կըղղ, եթե ուրիշ սուլթաններ փորձում են անհաճո ձայներ հանելով խանգարել Մացակի արքայական քունը, Սուլթանը ջարդում է նրանց թագը և ծվատում է նրանց ծիրանին. ծկղա՛...

- Այդ մասին շուտ պիտի մտածեիր,- ասաց Մացակը:

Եվ պարզվեց, որ Սուլթանը, կտուցից գատ, մի ուրիշ անցք ունի, և պարզվեց, որ

մեքենայի յուղիչով կարելի է յուղել նաև այդ անցքը, չնայած մեքենայի անցք չէր:
Որտեղի՞ց որտեղ: Կեցցե՛՛ Մացակը:

- Կղա՛, կղղա, կըղ...- Սուլթանը հիմա բողոքում էր այնպիսի վիսատ ձայնով, որ երևում էր ոչինչ չէր անի, կգանգատվեր, ամենաշատը:

- Դե հիմա այնքան կանչի՛ր...- Մացակը նրան շարունակաբար պատշգամբից ներքև ու գնաց քնելու:

Սուլթանը քայլ փոխելով երկար մտածում էր, թե ինչ կատարվեց իր հետ, վիզը ձգելով շուրջն էր նայում՝ մեկնաբանում սպասելով ուրիշներից. ախար այդ արքաները մտածելու կողմից խեղճ են. առանց խորհրդականի չեն կարողանում մտածել: Այդպես էլ Սուլթանը չհասկացավ, թե ինչ էին արել իրեն, ու այնքան էր երեսառած, որ չխրատվեց. թռավ բագրիքին, թևերը շխշխկացրեց և ուզեց կանչել՝ ծուղրուղո՛ւ: Երևի նաև՝ Մացակը քնա-ծե՛... Բայց օդը դուրս եկավ ոչ թե կտուցից, այլ այն մյուսից, յուղած տեղից, և դուրս եկավ ամեննին էլ ոչ գեղգեղալով, այլ՝ ֆրսա... Նա այնքան հիմարն էր, որ դեռ կարծում էր ծուղրուղու է կանչում, ու Մացակը ներսում ականջները փակում է ու հիմա պիտի ասի՝ գահրումա՛ր...

...Փռնու վրայով գլորվող ջրի հուշիկությամբ իմ մեջ մի բան ուռչում է, վարակելով ամբողջ մարմինս: Եվ բջիջներս տեղի են տալիս: Գուցե քաղցկեղ է, գուցե անցած անախորժության թաքուն հիշողություն, գուցե, անտեղյակ, որևէ ուժեղի մի բանում խանգարել են, և սիրտս թաքուն սպասում է ծեծին: Գուցե և էությունս լցվում է որևէ սրամտությամբ, որը պետք է ծնվի ինչ-որ դիպվածով, հանկարծակի, փռշտոցի պես: Չգիտեմ: Եվ քանի դեռ չգիտեմ, նա ինձ համար սարդի պես դարանած քաղցկեղ է, պատժի սպա սում է, քիթը մտած փռշտահիկ է, որ սպասում է մի ճառագայթ արևի - հա՛յ չ...

Ահա՛: Մացակը սրամտել է, իսկ տատիս շրթունքները պահվող ծիծաղից չեն կնճռոտվում: Տատս, ընդհակառակը, ասում է.

- Գետինը մտիր, գետինը... քո հասակի տղաները գյուղ են դեկավարում:

Այդ ճիշտ է: Նրա հասակի տղաներից մեկը օրերս դարձավ ֆերմայի վարիչ: Մացակն ու այդ տղան ծնվել են մի օր, դպրոց են ընդունվել միասին: Լավ էին սովորում, երկուսն էլ գերազանցիկ էին: Արտաքինով նման չէին, բայց ինչ-որ տեղ, թվում էր, խարդախութ յուն կար, և նրանք մի հորից էին, այնքան որ արտաքինով նման էին իրար: Դեռ տարբերությունը միայն այն էր, որ Մացակը հանձնարարված ոտանավորի մի բառը հանկարծ փոխում էր, հացը, օրինակ,

դարձնում էր երշիկ, կամ մի տողն էր փոխում՝ այսքան ուրախ կյանքը մեր ասելու փոխարեն հավաքվեցին քեռի աներ էր արտասանում, իսկ այդ տղան լսում էր, հետո լուրջ առարկում. «Մխալ ես ասում. երշիկ չէ, հաց է»: Մինչև հանրահաշվի հանդիպելը փոխադրվում էին միասին: Հանրահաշվի դասարանում այդ տղան մնաց. առաջին քառորդին, քանի դեռ չգիտեր առարկայի լրջությունը, սովորում էր, ոչինչ, գնահատականը «4» էր. երկրորդ քառորդին ասում էր.- Բայց ուժեղ գիտություն է, չէ՞...- և ցուցամատերով ականջները փակած՝ նայում էր դասագրքի մեջ մի տառի.

- Պլյուս: Նայիր, հետաքրքիր է, չէ՞, պլյուս...

Երկրորդ քառորդում գնահատականը «3» էր: Երրորդում «2» էր, չորրորդում՝ «1»: Յոթերորդ դասարանում այդ տղան նստեց երկու տարի, ութերորդում՝ երեք տարի, իսկ իններորդում ասում էր ցածր դասարանցի իր հետ կովողներին.

- Հասիր իններորդ՝ լեզուդ նոր երկարացրու: «Պատերազմի պատճառները: Պետք է տարբերել հետևանքը պատճառից»:

Տասներորդում այդ տղան այնքան սովորեց, մինչև դասընկերները գնացծին ինստիտուտ, վերադարձան դպրոց, նրան դաս տվեցին:

Իսկ նա ձեռք էր բարձրացնում հարց տալու ուսուցիչներին, որոնք հիմա իր հասակակիցներն էին.

- Ընկեր Հակոբյան, ինչո՞ւ չենք ասում բայդեր, այլ ասում ենք դերբայ: «Դերբայ - բայ դեր», - ասում էր նա մտահոգ:

Պատահում էր ընկերները անեկդոտ էին պատմում, սա լուրջ լսում էր և վերջում գլուխը դրական շարժում.- Այո՛...

Իսկ Մացակը յոթերորդում հանրահաշիվն այնպես հեշտ վերցրեց, ասես Էստաֆետայի փայտիկ էր՝ վազելիս ձեռքն առավ: Եվ ընդհանրապես նա դպրոցն այնպես շտապ վերջացրեց, որ մարդիկ չհասցրին տեսնել թե նրա ձեռքին որ դասարանի դասագիրք է: Մարդիկ չհասցրին նկատել նրա խելոքությունը: Արագ լուծել էր՝ Մացակինն էր, անսխալ թելադրություն էր՝ Մացակինն էր, պատերազմը,- պատճառ է, հետևանք է, պատրվակ է,- բոլոր կողմերով վերլուծել էր՝ Մացակինն էր, տեսուչ եկած ժամանակ դասարանը փրկել էր՝ Մացակինն էր: Բայց այդ ամենը Մացակը շատ էր թեթև անում, լուրջ չէր անում, կարծես ամեն ինչ լեզվին էր, նա հենց մի այն դուրս էր հանում, չէր մտածում. մանավանդ որ աչքերից մեկն էլ ահագին շիլ էր դե պի դուրս:

Իսկ այդ տղան մտածում էր. դեմքը լուրջ էր և այնքան էր լուրջ, ու այնպես էր

մտածում, որ թվում էր, թե տեսուչի եկած ժամանակ դասարանը փրկել է՝ նրանն էր, պատերազմը վերլուծել է՝ նրանն էր, և Մացակի խնդիրներն էլ նա էր լուծել, ընկերասիրություն էր արել, իսկ իրենը, ընկերոջը փրկելու համար, դիտմամբ խառնել էր. գրել էր, ջնջել էր, տակը, իբր մտքի ետևից ընկած, մարդու գլուխ էր նկարել և այդպես էլ հանձնել քննող ուսուցիչներին: Եվ նայելով նրա դեմքի լրջությանը, մարդ համոզված կոսահում էր.

- Դու կգնաս փիլիսոփայության ֆակուլտետ, այնպես չէ՞:

Իսկ Մացակի դեմքին նայելով մարդ ասում էր.

- Հիմա պարտադիր ուսուցում է, դու ինչո՞ւ դպրոց չես գնացել:

Հետո երկուսն էլ անասնապահական ֆերմայում էին աշխատում: Կաթի պահեստապետն ամեն օր այդ տղային ասում էր.

- Այսօր քո նախրի կաթը քիչ է: Ի՞նչ է պատահել, հիվա՞նդ ես:- Եվ ամեն օր պահեստապետին թվում էր, թե նախորդ օրը այդ տղայի նախրի կաթը ռեկորդային է եղել և վաղն էլ պիտի լինի: Իսկ Մացակին ասում էր.

- Վայ թե ջուր ես խառնում:- Եվ յուղայնությունն ստուգող գործիքը թափ էր տալիս, տնտղում էր տակից, գլխից. գործիքին չէր հավատում:- Դու ջուր խառնած կլինես,- ասում էր Մացակին:

Կենտրոնից եկել էին Մոսկվա ցուցահանդեսի տանելու Մացակին. դեմքով նրան չգիտեին. փնտրել էին ցուցակներում ամենաբարձր արդյունքը, գտել էին այդ թվերը, իսկ դրանց դեմը գրված էր եղել Մացակ: Եվ գրասենյակում դիմելով այդ տղային, շրջկոմի ներկայացուցիչն ասաց.

- Ուրեմն, ընկեր Մացակ, պատրաստվեցեք վաղը թոչելու:

- Մացակը ես եմ,- ասաց Մացակը:

- Օ՛...- բարեհոգի ժպտաց այդ ընկերը,- դա ինձ ծանոթ բան է. ես գիտեմ, որ ամեն գյուղ ունի իր ծաղրածուն:

Եվ չնայած այն տղան ամեննին էլ Մացակ չէր - գնաց ցուցահանդես: Եվ ոչ միայն ցուցահանդես: Նրա գործերն ուղարկեցին հեռակա ինստիտուտ: Դրա հետ՝ դարձրին ֆերմայի վարիչ: Դրա հետ՝ հանդիսավոր նիստերին

նախագահության մեջ էր լինում: Եվ կտեսնեք, որ այնտեղ, ինստիտուտում, նրա լրջությանը նայելով, դասախոսները կտանեն ստացիոնար: Իսկ ստացիոնարի վարչությունը նրան կպահի ասպիրանտ: Նա հենց դոկտորացու է:

Այդ ամենն ստացվում է ինքն իրեն. ոչ ոք նրա իշխանավոր քեռին չէ, այդ տղան ոչ ոքի չի քծնում: Պարզապես իր համար լուրջ կա: Մի բան, որ պակասում է

Մացակին: Ասենք, Մացակը մեղավոր չէ. աչքը դրսի վրա շիլ է: Բայց այն էլ մտածենք, որ եթե շիլ աչքը այդ տղայինը լիներ, մեր պատկերացմամբ լրջությունը շիլաչք կլիներ: Պարզապես հարկավոր է ամեն ինչ բարձրացնել տնքոցով, իջեցնել՝ տնքոցով, քո բանը չէ, ձեռք չես տալիս՝ նորի՛ց տնքալ, չեղած տեղն էլ տնքա՛լ:

...Փոշու վրայով գլորվող ջրի հուշիկությամբ իմ մեջ մի բան ուռչում է, վարակելով ամբողջ մարմինս: Եվ բջիջներս տեղի են տալիս: Գուցե քաղցկեղ է, գուցե անցած անախորժության թաքուն հիշողություն, գուցե, անտեղյակ, որևէ ուժեղի մի բանում խանգա րում եմ, ու սիրտս թաքուն սպասում է ծեծին:

Գյուղում ենք, մեր տոհմի մեջ ենք: Իսկ տոհմեցիները ծաղրածուներ են, ամեն մեկը մի գյուղ կծիծաղեցնի: Իսկ երբ մի տեղ ենք հավաքվում բոլոր տոհմեցիներս՝ ծիծաղեցնե լու ուժը մեծանում է այն հարաբերությամբ, ինչ հարաբերության մեջ է հարյուր առանձին գինվորի հարվածային ուժը հարյուր գինվորանոց վաշտի հարվածային ուժի հետ:

Դժբախտությունն այն է, որ աշխարհը լուրջ է, մտածում է, մտածելու ջիղը զարգացրել է ընթիշի թիկունքի պես, իսկ ծիծաղի ջիղը դարձել է ճգնավորի թև: Տոհմին հարս եկածները եթե ունևոր տնից են լինում, մեզ մոտ սկզբում իրենց լավ են զգում, որովհետև իրիկունները տոհմը նստում է բազմոցին, թախտին, սեղանի շուրջ և սկսում գյուղին ծաղրանկարել. քաշում- կախում է մեկի քիթը, մեկի բերանը պատռում- հասցնում է ականջատակերը, իսկ ականջներն այնպես է ձգում, որ գլխարկի կողքերից դրանք բարձրանում են և գլխից շատ վերև են լինում, շարժվում են օդում, տոհմը մեկին այնքան արագ է խոսեցնում, որ բառերը կպչում են իրար, արանք չեն ունենում, պատահում է մի բառի տառը թռչում-տեղավորվում է մի ուրիշ բառի մեջ,- և այդ հարսը մտածում է, որ ընկել է արքունիք: Հետո այդ հարսը տեսնում է, որ այն արագախոսը, ճիշտ է, խոսքը խճճում է, բայց նախազահ է, այն մյուսը, ճիշտ է, օդում ճոճվող ականջներ ունի, բայց ավանակ չէ. պարզապես ականջները շարժելով բաներ է կրում իր տուն, իսկ կախքիթը վերստուգիչ հանձնաժողովի նախազահ է. թերաչափումներ է գտնում և դժգոհում, կաշառվում է և դժգոհում. դժգոհ- դժգոհ՝ ծիծաղում է բոլորի վրա: Եվ տոհմին հարս եկածը սպասում է մերոնք նստեն բազմոցին, թախտին, սեղանի շուրջ՝ ծաղրանկարելու գյուղին, ու ջղային ճչում է.

- Իսկ դո՛ւք ինչ եք: Աշխարհը թալանած տանում են, իսկ սրանք նստել են՝ սրա՛ քիթը, սրա՛ բերանը, սրա՛ ականջները... Ձեր ականջներին, ձեր ականջների՛ն

նայեք... Ականջավորները հենց դուք եք եղել, ես միամիտ...

Ունևոր տներից հարս եկածները մաղձից երկու տարում ծերանում են, լինում են գյուղի ամենակովարարները և մեռնում են երեսունյոթ-քառասուն տարեկանում՝ լեղապարկի հիվանդությունից, խալիպից, ջղային քորից, իսկ իրենց՝ մեռնողների կարծիքով նրանց սպանում է փողոտվող աշխարհի դիմաց մեր տոհմի քարե դեմքը:

Իսկ եթե հարս եկածը որևէ հովվի, որևէ չիբուխ քաշող ջաղացպանի, ճեպընթացի սլացքն անտարբեր դիտող սլաքավարի կամ որևէ խաղաղ որսորդի աղջիկ է լինում, նստում է տոհմի մեջ թախտին ու ծիծաղում, ու ասում.- Վայ ծիծաղու մեռանք»:

Այդպես այդ սլաքավարի կամ խաղաղ որսորդի աղջկանով մեր տոհմը հարստանում է: Նրանք մեր տոհմը հարստացնում են ծիծաղող երեխաներով: Չպետք է կարծել, թե ունևոր տներից հարս եկածներն այդպես անհետ կորչում են՝ թողնելով այս աշխարհում միայն մի հողաթումբ, որ օր- օրի հավասարվում է գետնին: Նրանցից ծնվածները լինում են մի քիչ մաղձոտ, մի քիչ ծաղրածու, երբեմն հայիոյում են, երբեմն ծիծաղում: Իսկ ընդհանրապես թողնում են այն մարդու տպավորությունը, որի ձեռքերը քոր են գալիս կովի համար, բայց այնպես էլ չի խառնվում տուրուդմփոցին: Նրանցից մեկը հիմա բանտարկված է գողության պատճառով: Իսկ մինչև այդ ծիծաղում էր գողության, հետապնդման, հարցաքննության ու հետախույզ շան վրա: Ետևից պատր քանդել, մտել էր խանութ, վերցրել էր մթի մեջ ինչ պատահել էր՝ մի արկղ լվացքի սև սապոն, մի արկղ կոնյակ, մի կիլոյի չափ մանրադրամ և մի բաճկոն՝ իր վրայից մի չորս-հինգ համարով մեծ: Այսքանը: Համենայն դեպս այսքանը գտնվեց գոմաղբի մեջ: Իսկ խանութի աշխատողն ասում էր, թե տարել են տասնչորս-տասնհինգ հազարի ապրանք: Գողանալը՝ գողանալ: Շատերն են շատ բան գողանում, բայց այնպես են մարդամեջ ելնում, կարծես քիչ առաջ է վերջացել իրենց շքանշանով պարգևատրման արարողությունը: Իսկ մեր տոհմեցու ծաղրածուական ջիղը բռնեց գողության հենց հաջորդ օրը: Խմեց կոնյակներից մեկը, հագավ- կորավ բաճկոնի մեջ, գրպանը մարադրամ լցրեց այնքան, որ բաճկոնն այդ կողմից կախվել, քսվում էր գետնին, ու բռնեց երեխայի թաթիկը, տարավ խանութ. «Ո՛ր քաղցրից ես ուզում, պապան աղքատ չէ»: Հարցաքննության նր իրեն պատռում էր, թե եղածը օճառ, մանրադրամ, բաճկոն ու կոնյակ է, շան որդին չէր ասում գլխավոր պահուստի տեղը. հետո ցույց տվեց խանութի աշխատողի փորը: Սա

նստել էր պետական կորստի համար վշտացած, սրիկաների դեմ վշտացած և մեղադրողի խոսքերի հետ շարժում էր գլուխը՝ շեշտեր էր դնում արդարության խոսքերի վրա: Բայց մեր տոհմեցուն սա ուրիշ կերպ էր երևում: Մեր տոհմեցին հասկանում էր, որ իրեն հեզնում է խանութի աշխատողը. «Դու ի՞նչ գող ես, ախպերս, միանգամից վերցրել ես մի կիլո կոպեկ, իհարկե՛ կբռնվես: Պետք է վերցնել օրական մի քանի կոպեկանոց, քիչ-քիչ, քիչ-քիչ: Վերջում էլի մի կիլո է լինում, բայց չի երևում: Վերջում տասնհինգ հազար է լինում: Է, ախպերս...»:

Տոհմեցին չհամոզեց, որ չունի գլխավոր պահուստ, կատաղեց, հայիոյեց, հոգնած վեր ընկավ աթոռին և դրանից հետո ծիծաղում էր, քննիչի հարցերը ասում էր քննիչից շուտ և հռիռում էր, ապա ասաց, որ մինչև հետախույզ շուն չբերեն՝ պահուստի տեղը չի ասի. «Ես այդքան հասարա՞կ գող եմ, որ առանց շան վեր եք կացել եկել»: Ապա որսաց նրա համբերության հատնելու պահը և կանխեց. «Ինչ եք կարծում, ծեծելու ժամանակը չէ՞»:

Խանութի աշխատողի մասին տոհմն այնպես էր դատում, ինչպես տոհմեցին, տոհմն ուզում էր նրա երեսին մամլակ շպրտել, երբեմն՝ կոտրել դատավորի անհասկացող գլուխը, բայց ոչինչ էլ չկարողացավ անել և տվեց գողացված տասնհինգ հազարը, որը էր ամբողջ տոհմի կովերը, հարսների մատանիները, «Սոնա. 1905» և «Պախրա» խալիները, «Սիրամարգ» կարպետը, ինքնաեղը, կարի մեքենան և բարձերից մի երկուսը: Եվ այդ թալանին դեմ տվեց իր ծիծաղը:

- Ո՛ւմ վրա եք ծիծաղում... ինքներդ ձեզ վրա եք ծիծաղում:

- Ո՞վ էր: Հարսներից մեկը, որ տրորում էր մատանու տեղը: Նրա և հայրն էր սլաքավար, և ինքն էր ականջ ձգող-երկարացնող, բայց թե ինչո՞ւ էր մաղձոտում, աստված գիտե: Նա ասում էր, որ դա գործիլաների հոտ է և ոչ թե տոհմ, ասում էր, թե բավական էր հարցաքննվելիս, երկու ժամն ի՞նչ է, երկու ժամ լուրջ մարդու տեսք պահել, որպեսզի վնասը հատուցեր վնասողը և ոչ թե այդ, այդ, այդ... սապոնը, ավանակը, այդ սապնի գողը: Նա ճիշտ էր ասում: Բայց ծիծաղելի են այդ ծաղրածոները, երբ փորձում են վշտանալ, լրջանալ, մտածողի տեսք ընդունել, գործարարի պես շտապել՝ անել այնպիսի բաներ, ինչ անում են լուրջ մարդիկ: Նա, այդ ծաղրածուն, մտածում է, շտապում է, և կարծես վատ չի մտածում և շտապելիս գործարարից ետ չի մնում: Բայց տղայական ինչ- որ ցանկություն է առաջանում մեջդ՝ ծալած ցուցամատով նրա քունքին տկտկացնել՝ հը՛, մտածո՞ւմ ես, մտածի՛ր, մտածի՛ր,- կամ փողոցում վազել այդ շտապող մարդու ետևից ու կանչել. ծաղրածո՛ւ, ծաղրածո՛ւ...

Վախճանգի երեխան ծանր հիվանդ էր. Վախճանգը ոռնում էր, կարմրած աչքերը դուրս էին թռչում, իսկ բրիգադիրը եկել ասում է.

- Էլի՛ լակել ես...

Մարդ է ծնվում մեր տոհմում, մարդ է մահանում - ոչ ոք չի իմանում այդ. գուցե և իմանում են, բայց լուրջ չեն համարում, թատրոնի պես մի բան են համարում: Միայն մենք ենք նկատում մեր երեխայի բլբլոցը, քայլելը, խելոքությունը, սիրունությունը,- դրսի աշխարհը մեր երեխայի միայն ծնունդն է արձանագրում, որպեսզի քսան տարի հետո տանի գինժառայության, դրսի աշխարհը մերոնցից միայն այդպես պատրաստիների հետ գործ ունի: Գալիս է, - գնա աշխատանքի՛, - ասում է և տալիս է մի անուն, որ ծննդյան վկայականի անունը չէ,- Նազար, Մացո կամ այդպիսի մի բան, որ պրիստավի անու ն չի եղել, հեղկոմի նախագահի անուն չի եղել և ներկայիս կարգին մարդկանցից որևէ մեկի անունը չէ, այլ մի որևէ դարբնի, ջրադացպանի և էլի այդպիսի մարդկանց, որոնք աշխարհի ուղարկած թալանի հրավիրող բոլոր ինպուլսները խլացնում են իրենց չախչախի աղմուկի մեջ և գլուխը կախ իրենց գործին են մնում: Զուրն ու չախչախը քիչ է՝ նրանք կիսով չափ խուլ են լինում, խլությունը քիչ է՝ նրանք բամբակ են խցկում ականջները,- և գայթակղող ոչ մի ինպուլս չի հասնում նրանց գիտակցության խորքերը: Նրանք լինում են ամենալավ պատմողը: Այդ նրանք պետք է հնարած լինեն այն հեքիաթը, որի մեջ գայլն ու մաքին միասին արածում են և հոտի մեջ շուն չկա: Եթե նրանց անունը Տիգրան է՝ աշխարհը Տիգո է ասում, եթե Մացակ է՝ Մացո է ասում, և ինչքան էլ կարճ լինի անունը՝ աշխարհը մի բան դեն է գցում, որովհետև ինքն աշխարհը թալանի վազելուց առաջ որոշ բաներ կորցրել է և բոլորին է ուզում իր պատկերին բերել, այն վատ կնոջ հավակնությամբ, որի քիմքին չի գալիս անարատությունը: Սա նորություն չէ, պատմություն ունի: Եվ այդ պատմությունը գնում-հասնում է Տիգրան Մեծի օրերը, Տիգրան Մեծի պալատը: Պալատն ունեցել է լարախաղաց և ծաղրածու, հնարում են ես: Ծաղրածուն եղել է մեր տոհմի պապը: Լարախաղացը լրջությամբ, լարված, ճակատին քրտինք՝ ձողով անցել է լարի վրայով: Նրան ոսկեդրամ են նվիրել: Հետո լարի վրա ցատկոտել է ծաղրածուն՝ առանց ձողի, ծիծաղեցնելով, երբեմն ցույց տալով թե ընկնում է, գուցե և ծիծաղեցնելու համար ընկնելով, հետո նորից է վազել՝ երբեմն լարի վրայով, երբեմն տակով: Բայց որովհետև նա դրած է եղել էծի միջուք և քթին քսած է եղել մուր,- նրան նետել են փտած արքայախնձոր: Եվ մեր պապի ժպիտի մեջ կաթել է

առաջին կաթիլ թույնը: Մաքուր, տաք, առատ արյան պես ժպիտը վարարում է մեր երակներում. մի կաթիլ թույնը շատ է քիչ մեզ թունավորելու համար: Բայց աշխարհի հիվանդ լեղապարկը, ամեն անգամ, երկու հազար տարի անընդհատ, թույն է կաթել մեր արյան մեջ, և հիմա ծիծաղում է մի սերունդ, որի աչքերը չեն ծիծաղում: Եվ ատամներն են առատ երբ բացվում են ծիծաղելու, և ձայնն է գրնգալեն կոտորակվում, բայց աչքերից նայում է դառնությունը:

Ինչպիսի՜ իմունիտետ ենք կորցնում: Եվ՝ այդպես՝ առանց ծիծաղի, կյանքը երկու օրում մեզ կուտի քաղցկեղի պես:

2

Ես ուզում եմ պատմել, թե ինչպես էր Վախթանգն անհաջողությանը դեմ տալիս իր ծիծաղը: Բայց սկզբից պայմանավորվենք, որ 1950-ին մենք ապրելիս ենք եղել վատ, թեկուզ և ճիշտ է, 1950-ը 1917-ից հետո է ընկնում:

Բանն այն է, որ Վախթանգը հենց 50-ին վերջացրեց միջնակարգ դպրոցը: Եվ որովհետև դպրոցում նրան միշտ գովել էին՝ մտածում էր համալսարանի մասին: Եկավ, որ գնանք վկայականը վերցնենք: Հայրս՝ ծաղրածուների մեր տոհմի ամենատրախը, ձեռն առավ.

- Բան-ման սովորե՞լ ես, թե՞ թուղթ է, էլի, ստանում ես:

- Սովորել եմ,- ասաց Վախթանգը:

Հայրս մի հատուկ կասկածանքով նայեց նրան: Այդ հայացքը նշանակում էր. չես սովորել՝ չես սովորել, ի՞նձ ինչու ես խաբում:

- Ապացուցե՞մ,- հարցրեց Վախթանգը:

Ես յոթերորդ դասարանում էի, երկրաչափություն էի սովորում, ես ասացի.

- Աքսիոմաներն ապացուցման կարիք չեն զգում:

- Ճիշտ է,- ասաց Վախթանգը,- չապացուցենք:

Բայց նույն պահին էլ նրա աչքերը ճպճպացին. այդ նշանակում էր, թե՛ գտնվել էր չօգտագործված մի սրամտություն, մի հիանալի բան, որ ո՛վ գիտե որ անկյունում ընկած ժանգոտում էր:

- Հայրիկին ապացուցենք:

Երկու տարեկան եղբորս մոտ մենք գետնին մի բաժակ ջուր թափեցինք չլշլալով, և երեխան կծկվեց, ապա լաց եղավ: Եվ հայրս, Վախթանգը, ես տեսանք, որ երեխան տակը թացացրել է, տակին, ոտքերի արանքում, մի փոքրիկ լճակ էր սարքել նրա ջուրը:

- Բան էր, էլի, եղավ:- Հայրս նայեց պապին ու մեզ աչքով արեց: Պապն այնտեղ ակնոցը քթին մի լուրջ բանի էր: Մենք ջրամանը բարձրացրինք մեր գլխից վեր և չոչնալով թափեցինք ամբողջ ջուրը: Կարգին անձրևի ձայն էր գալիս: Պապը փնտրեց ձեռնափայտը, շփոթվեց, չտեսավ ձեռնափայտը ոտքի մոտ դրած և ոչ էլ սպասեց մենք իրեն տանք - գայթելով, կուզիկ-մուզիկ գնաց: Այնքան էր շտապել, իրեն այնպես էր կորցրել, որ հետո մի կես ժամ մտածում էր, թե ինչն էր եղել ձեռքի գործը: Ու երբեմն հեռու կասկածով նայում էր մեր կողմը:

- Դե նրանք երեխաներ են, նրանց հետ կպատահի,- ասաց հայրս, և երևաց, որ ուզում է փորձն իր վրա փորձենք:

- Լավ,- ասացինք մենք,- դո՛ւ գիտես, ով որ գղջա՛ց... և նրա աչքերին նայելով ձեռքներս տարանք մեծ կժին:

- Կորե՛ք, հիմարի տղերք,- ոտքը գետնին խփեց հայրս:

- Ոչի՛նչ,- ասացի ես հորս,- կուժը՝ մեզ կարգելես: Բայց հո մի օր անձրև կգա, միանգամից կսկսի անձրև գալ, կտեսնենք թե ոնց ես վագում պապի ճանապարհով...

Ճանապարհին, գնալիս, ուրախ էինք հորս ծիծաղեցնելու համար, իսկ գալիս նրա համար էինք ուրախ, որ ուսուցիչները միաբերան պնդում էին, թե ցանկացածդ բույսի դռները բաց են Վախթանգի առջև: Ուրեմն՝ համալսարան էր, մարմարե սանդուղքներ, ոսկե շրջանակ ակնոցով պրոֆեսորներ և Վախթանգը՝ մաքուր վերնաշապիկով: Եվ սև փայլով կոշիկներ: Կոշիկներ, որովհետև մենք տրեխով էինք, տրեխը ծակ էր, և քարը քերծեց Վախթանգի ոտքը: Եվ որովհետև Վախթանգն արդեն մեր մտքում կոշիկով ու սպիտակ վերնաշապիկով էր,- ծիծաղեցինք տրեխի վրա: Ախար նա, այդ տրեխը, ինքը ծակ էր, տակ բոլորովին չունեի, բայց քիթը տնկել էր, կարծես ինքը չէր ծակը: Համալսարան, ուրեմն համալսարան: Վախթանգը կլինի երրորդ կուրսեցի՝ ես կընդունվեմ: Միասին կնստենք ուսանողական գիտական խորհրդի նիստին ու սուր-սուր խոսքեր կշարտենք սխալ-սխալ բաներ ասողին: Պրոֆեսորը կժպտա մեզ.- Ճիշտ է և դիպուկ,- կասի պրոֆեսորը:

Դուրը բացեցինք՝ նրա հայրը՝ իմ հորեղբայրը նստել էր, ապակու կտորով կաշի էր մաքրում: Մայրը բուրդ էր գգում: Պատերը սվաղած չէին: Առաստաղը տախտակած չէր: Հատակը գետին էր: Գոմ էր, տուն չէր: Եվ կարպետի եղջերուն գարդ չէր, անասուն էր. առջևը խոտ լցրու, և գոմը իսկական գոմ կլինի: Աստված իմ... Դու հին օրերի ոչխարած չես, որ ապրելիք հեքիաթների ու կովերի հետ,

գոմը տաք լինել,- և դա քեզ թվար արքայություն. երազ չունենայիր, տեսածդ կով լինել և երազիդ մեջ էլ կով ու կով լինել: Արքային պատկերացնեիր փափախով, առջև ուտելու դնեիր բրթած կաթ, ինչ- որ բնագոյով զգայիր, որ կաթը քիչ է ու ասեիր.- Լավաշով կաթ և արքայական ուրիշ բաներ:

Դու գիրք ես կարդացել, անուններ գիտես, մոտավոր չափերով գիտես երկիրը, ամեն օր լսում ես ատոմային ռումբի մասին, որի ուժգնությունը քեզ դուր է գալիս, դու կինոնկար ես տեսնում, կինոնկարի գույներն այնքան վառ են, որ աչքերդ շաղվում են, դու կարողանում ես հեռավոր ճրագ Մարսը քո մտքով մոտեցնել քեզ՝ ենթադրելու համար նրա վրա ծովեր, դաշտեր, լեռներ կարմրին տվող մշուշի մեջ,- և բանից պարզվում է, որ դրանք երազի մեջ են եղել, դու դրանց մեջ չես, քոնը մրոտ պատերով տուն է, կաշի է, ապակիով քերի, թափիր մազը,- խրրթ, խրրթ, խրրթ,- որպեսզի տրեխ հագնես, հորթ պահելու գնաս, որպեսզի Մարսը դառնա հեռավոր ճրագ:

- Հրեն հա՛, եզնարածի աստղը դուրս է գալիս...

- Երեխասս վկայականն ստացավ,- ասաց մայրը:

- Ես կգնամ սովորելու,- ասաց Վախթանգը:

- Ստացա՞ր,- ասաց հայրը:

- Ես կգնամ սովորելու:

- Ոտքիդ չափսը բեր վերցնեն,- ասաց հայրը:

- Ես կգնամ սովորելու:

- Բեր ոտքդ չափեն,- ասաց հայրը:

- Ինձ պետք չի, ես կոշիկ եմ հագնելու, ով որ հագնելու է՝ նրա ոտքի չափսը վերցրու:

- Շատ լավ կաշի է,- ասաց հայրը,- մեջքի շերտն է, երկու ամիս կդիմանա:

- Ես կգնամ սովորելու:

- Ո՛տքդ:

Վախթանգը ոտքը չտվեց:

- Ո՛տքդ:- Հայրը կաշին փռեց Վախթանգի առջև:- Ոտքդ դիր: Լավ կաշի է:

Վախթանգը ոտքը չդրեց: Հայրը շուրջն էր նայում՝ կնոջը, ինձ, պատերին... հետո կրկին կնոջը, ինձ, պատերին:

- Լավ կաշի է,- շփոթված ասաց նա և գլուխը հակեց: Դրանից հետո գլուխն այլևս չբարձրացրեց: Շրջապատում չկար այն հաստատուն բանը, որից հնարավոր լինել. պատերը, դե, մրոտ պատեր էին, կինը նրան նայում էր

նրա պես խեղդվողի հայացքով, իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա հիմա, տասը-տասներկու տարի հետո ենթադրե լով, պետք է որ իմ խղճահարությունը գար, և ատենի նրա խեղճությունը, և զգվեի այդ խեղճությունից, ինչպես այն հսկայից, որին ոչիլն ուտում է: Նա պատերազմին ոտքի տակ է տվել ամբողջ Եվրոպան, դպրոցականներին ու դասագրքերի հետ վիճում էր Գերմանիայի պարտության պատճառների վրա, նա մի բուռ մեղալ ու շքանշան էր բերել իր հետ, եթե բռնցքում էր եզանը՝ եզը ծնկի էր գալիս,- և հիմա կուչ էր եկել տրեխացվի վրա - խը՛րթ, խը՛րթ, խը՛րթ... Ձեռքերը դողում էին, մատը ծակեց: Եվ արյունը ծծելով հաշվել սկսեց, թե կովը կծախի, կհանի երեք հազար ռուբլի, հազար հինգ հարյուրը Վախթանգի կոշիկ-բաճկոնի, հազար հինգ հարյուրը ուտելու, մինչև հունվար... Կովը կծախի, կհանի վեց հազար ռուբլի, երկու հազար հինգ հարյուրը կոշիկի, բաճկոնի, վերարկուի, երեք հազար հինգ հարյուրը ուտելու, մեկ տարի: Մնացած չորս տարի՞ն: Կովը կծախի, կհանի տա՛սը հազար ռուբլի, էդ քեզ գնացքի փող, հագուստի՛ փող, հացի՛ փող, այդ քեզ երեք տարվա կյանք... Իսկ մնացած երկու տարի՞ն... Կովը ծախեց, շատ բարի, հանեց մեկ միլիոն ութ հարյուր քառասուն հազար վեց հարյուր իննսունչորս ռուբլի, բարի, կովի փողը հինգ տարի լիուլի բավականացրեց, Վախթանգը պրոֆեսորների հետ վիճեց, հաղթեց... Իսկ տո՞ւնը. տանը երեխա՛ կա, երեխամա՛յր կա, կարտոֆիլը քի՛չ է նրանց համար...

- Ո՛տքդ,- գոռաց հորեղբայրս,- լակո՛ւտ...

Վախթանգը տվեց ոտքը: Հայրը վերցրեց նրա ոտքի չափսը, ձևեց կաշին և սկսեց ծակոտել: Եվ անընդհատ ներքև, կաշվին նայելով: Վախթանգը դուրս գնաց: Ես կանգնել նայում էի: Հիմա, տասը- տասներկու տարի հետո ենթադրելով, հորեղբայրս մեծացավ, դարձավ վիթխարի, դարձավ բրոնզ, քայլեց Եվրոպայի երկրների վրայով կանգնեց Բեռլինում՝ բարձր, մեծ, հպարտ ու փայլփլաց թուխ բրոնզի փայլով, և արձանագործը նրա պատվանդանին փորեց իր անունը:

- Այս արյունն ինչ է ուզում ինձանից.- ասում էր հորեղբայրս մատը ծծելով: Կինը նավթ բերեց, նավթով կտրեց արյունը:- Ինչո՞ւ ես նայում, տղաս,- ասում էր հորեղբայրս,- տրեխ չունես, հա՛... Վախթանգին նախանձում ես, հա՛... Գործեցի, քեզ համար էլ գործեցի... Կաշին շատ լավն է, եթե մաշեցի՛ր: Դու չես մաշի, երեխան կմեծանա կհագնի՝ նա էլ չի մաշի...

Ես դուրս գնացի: Վախթանգն այգում էր, աչքերը թաց էին:

- Ինչո՞ւ ես լաց լինում,- ասաց Վախթանգն ինձ:

- Իսկ դո՞ւ:

- Իմը կոտենից եղավ:

- Ուր է կոտեն՝... կոտեն չկա՛... կոտենը նոր է ծլելո՞ւ... Եթե լիներ, ուտեի՝ կոտենից կլինե՛ր:

- Դե գնա, է, փիլիսոփա՛...

Վախթանգի աչքերը ճաճալացին.- Դու լաց լինելիս՝ ոնց որ քուռակ գոա,- և ցույց տվեց իշուկի չափը՝ փոքրիկ, բրդոտ, դնչիկն սպիտակ... Ի՛նչ ծիծաղելի ու սիրելի բան է այդ քուռակը գոալ փորձելիս: Բոլորովին չի կարողանում, բոլորովին աղավաղում է, ինչպես եղբայրս է աղավաղում «հակահեղափոխական» բառը.- Հափահեկա...

Հետո մենք գնացինք տատից խնձոր գողանալու: Մառանի դուռը բաց էր: Բայց որպեսզի իսկական գողություն լիներ՝ մենք ստանք պատուհանից: Եվ որպեսզի իսկական գողություն լիներ՝ վերցրած երեք-երեք խնձորները պահեցինք ծոցներիս մեջ և ուզում էինք դուրս գալ պատուհանից, որպեսզի իսկական գողություն լիներ: Վախթանգը մինչև կեսը մարմինը դուրս քաշեց ու մնաց:- Գնա՛,- ասացի: Քացով հայտնեց, որ չխոսեմ: Դռնից դուրս եկա՝ տեսնեմ ի՛նչ է եղել,- տատս կանգնել էր այնտեղ, և իրար էին նայում հեքիաթի դարանած տղայի և արտը տրորող ձիու պես: Իրարով հիացած: Հետո տատը ժպտաց անատամ բերանի ժպիտով:- Մի փետ տուր,- դարձավ ինձ: Ես քրքջացի, որով հետև չալիկը ձեռքին՝ ասում էր մի փետ տուր:

- Գող կատվին բռնեցի՛... Մի փե՛տ տուր քեզ ասում եմ...- Եվ տատը փնտրեց ու գտավ չալիկն իր ձեռքին: Մտավ մառան ու մառանից տուր թե կտաս Վախթանգի անձեռքուզլուխ շավարին: Ախար նրա գլուխը գլխարկով և ձեռքերը թևերով պատուհանից դուրս էին և միայն գոտկատեղից ներքևն էր ներսը:

- Ա՛ն քեզ, ա՛ն քեզ, ա՛ն քեզ,- խփում էր տատիկը, իսկ ես լրջանում էի.- որ մյուս անգամ անձեռուզլուխ չգաս գողության, որ մյուս անգամ անձեռուզլուխ չգաս գողության, անձեռուզլուխ չգաս գողության...

Վախթանգն իրեն ձգում էր, չէր կարողանում դուրս գալ: Իսկ երբ տատն արդեն հոգ նում էր, Վախթանգն իրեն քաշեց, դուրսը թրմփաց և ծիծաղելով փախավ:

-Գող շո՛ւն...

Հետո տատս շոտ եկավ ինձ, ու պարզվեց, որ մի տանտեր է ու մի գող է, ու մի դուռ է, տանտիրոջ ձեռքին փայտ կա, իսկ գողը վախկոտ նապաստակ է, իսկ

միակ դուռը բռնված է տանտիրոջից:

- Դո՛ւ այստեղ ինչ ես անում...- տատը վրա բերեց չալիկը, ես ինձ աջ գցեցի, փայտը ջարդեց ձախ պատի տակի պուլիկը. տատը վրա բերեց չալիկը, ես ինձ ձախ գցեցի, փայտը ջարդեց աջ պատի տակի պուլիկը. տատը վրա բերեց չալիկը, ես առաջ փովեցի, իսկ փայտը ջարդեց ետնապատի տակի պուլիկը. տատը վրա բերեց չալիկը, ես ինձ ետ շարտեցի, և փայտը ջարդեց դռան տակի պուլիկը: Բոլոր պուլիկները ջարդվեցին: Երբ կոտրվեց ձախ պատի տակինը, տատս ասաց.- ոչինչ, կկոծկեմ, էլի կլինի հին պուլիկը: Երբ երկրորդը կոտրվեց, տատս ասաց.- ոչինչ, կկոծկեմ, կլինի նույն պուլիկը: Երբ բոլոր պուլիկներն էին ջարդվել՝ տատս լաց եղավ, ասաց.- Այդքան կոծիկ որտեղի՞ց... այդքան կոծիկ չունեմ... այդքան կոծիկ չունեմ... այդքան կոծիկ չունեմ...

- Տա՛տ...

Նա պատերազմում կորցրել էր ախպոր յոթ տղա, մեկ ախպեր, չորս որդի ու տասնմեկ թոռ: 1943-ին Թիֆլիսի հիվանդանոցից իր ձեռքով բերեց փոքր տղայի դիակը. մխիթարանքի խոսքեր էր մրմնջում հարսնացվին և խառնում էր հոգեհացի ճաշը կրակին: Նա հետո սուր կարոտով հիշում էր փոքր որդուն, չոքում էր գգրոցի առջև հանելու լուսանկարը, իսկ նրանք՝ կորսվածների լուսանկարները քսաներեքն էին, տատը փոքր որդու լուսանկարին չէր հասնում, հանում էր քսաներեքից որևէ մեկին ու օրորվելով մրմնջում:

- Տա՛տ...

- Այդքան կոծիկ չունեմ, այդքան կոծիկ չունեմ... Այսքանը կոծկե՛լ կլինի...

Նա բռնել էր դռան տակին ջարդված պուլիկի կտորը և օրորվելով մրմնջում էր:

- Այ տա՛տ...

.....

Հետո ես ուզում էի դուրս գալ, գտնել Վախթանգին. ես հասա դռանը, տատը չալիկով փակեց ճանապարհը:

- Պատուհանից: Դու Վախթանգից թանգ չես: Պատուհանից: Ես կասեմ դպրոցից քեզ հեռացնեն, գո՛ղ կատու...

Այն ժամանակ, տասներկու տարի առաջ, 1950-ի Վախթանգի շտվորելու տարին, Վախթանգն ու ես մեր շներին կովեցրինք: Նրանք ատամները բացած գոմոռում էին, վրա չէին գալիս, ու մենք նրանց հրեցինք, գցեցինք իրար վրա: Խառնվեցին իրար, գունդու կծիկ դարձան, չէր երևում որն է որի ոտքը, պոչը, գլուխը, որն է տակին, որը վրային, և մի այնպիսի ծկլթոց եղավ, որ նայելու դուրս

եկավ ամբողջ թաղը:

Համալսարան, իհարկե, չգնաց: Ոմանք գնում են համալսարան, ոմանք չեն գնում: Գնացողները մեկընդմիշտ կոշիկ են հագնում, իսկ չգնացողներին, եթե 1950 թիվ է, բավարարում է տրեխն էլ: Մեծ դժբախտություն չէ: Մարդիկ քսաներեք հարազատ են կորցնում, բայց դարձյալ իրենց պինդ են պահում՝ որպեսզի հիշողությունները քսաներեքի մասին ապաստարան ունենան: Հարկավոր է պարզապես շներին կովեցնել, գողություն-գողություն խաղալ, պայմանական ռեֆլեքսը փորձել մարդկանց վրա փոքրից մեծ,- և տրեխը կոշիկ է թվում, կոշիկը տրեխ է թվում: Նույնիսկ անկարևոր չի թվում թե կաշին փորատակի՞ է, քի՞չ կդիմանա, թե մեջքի գոլ է: Համենայն դեպս մենք մեր տրեխներից գոհ էինք: Մի երեք ամիս հագնում էինք՝ չէին ծակվում, մի երեք ամիս էլ կարկատելով էինք հագնում: Մոտ յոթ ամիս: